

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԴ

Այս իրավունքները հատուկ են բոլոր այն անձանց, որոնցից խնդրվում է մասնակցել բժշկական հետազոտության: Որպես հետազոտության մասնակից, ունեն հետևյալ իրավունքները`

1. Իրավունք ունեն, որ ինձ հաղորդեն, թե հետազոտությունը ի՞նչ է որոնում:
2. Իրավունք ունեն, որ ինձ հաղորդեն հետազոտության բոլոր ընթացակարգերի, դեղերի եւ/կամ գործիքների մասին, եւ եթե սրանցից որեւէ մեկը տարբերվում է սովորական գործածությունում կիրարկվածներից:
3. Իրավունք ունեն, որ ինձ հաղորդեն որեւէ վտանգի, անհանգստության կամ կողմնակի հետեւանքների մասին, որոնք կարող են տրամաբանորեն հայտնվել հետազոտության արդյունքում:
4. Իրավունք ունեն, որ ինձ հաղորդեն որեւէ նպաստի մասին, եթե լինի, որը կարող է բխել իմ մասնակցությունից:
5. Իրավունք ունեն, որ ինձ հաղորդեն ուրիշ այլընտրանքների մասին եւ եթե նրանք կարող են լինել ավելի լավ կամ վատ, քան հետազոտությունում լինելը: Այդ այլընտրանքները կարող են ընդգրկել այլ ընթացակարգեր, դեղեր կամ գործիքներ:
6. Իրավունք ունեն, որ ինձ հաղորդեն ի՞նչ տեսակի բուժում կտրվի եթե հետազոտությունը որեւէ բարդություն առաջացնի:
7. Իրավունք ունեն ամբողջովին հետազոտության կամ ընթացակարգի մասին որեւէ հարց տալու: Կարող եմ այս հարցերը տալ հետազոտության սկզբնավորությունից առաջ կամ նրա ընթացքում:
8. Իրավունք ունեն մերժելու հետազոտության մասնակցությունը կամ այն կասեցնել որեւէ պահին: Այս որոշումը չի ազդելու իմ բուժման կամ իմ բժշկի կամ այս հաստատության հետ իմ հարաբերությանը որեւէ այլ կերպով:
9. Իրավունք ունեն ստանալու հետազոտության գրավոր հավանության թերթիկի ստորագրված ու թվագրված պատճեն:
10. Իրավունք ունեն ազատ լինելու որեւէ ճնշումից՝ հետազոտությունում մասնակցելու իմ որոշումը կայացնելու ընթացքում:

Եթե հարցեր կամ մտահոգություններ ունենամ, կարող եմ հարցնել հետազոտողին կամ հետազոտության օգնականին: Կարող եմ նաեւ կապվել UCLAի Մարդկային հետազոտության պաշտպանության ծրագրի գրասենյակի (OHRPP) հետ, որն օգնում է պաշտպանել հետազոտության մասնակիցների: Կարող եմ կապվել OHRPP-ին զանգահարելով 310-825-5344 համարին՝ առավոտյան ժամը 8:00-ից մինչեւ կեսօրից հետո ժամը 5:00, երկուշաբթի մինչեւ ուրբաթ օրերին: Եթե զանգահարեմ այս գրասենյակը եւ չեմ խոսում անգլերեն կամ իսպաներեն, պետք է մեկն իմ մոտ լինի, որը կարողանա թարգմանել ինձ համար: Կարող եմ նաեւ գրել հետևյալ հասցեով՝ OHRPP, 11000 Kinross Avenue, Suite 102, Box 951694, Los Angeles, CA 90095-1694: